ՅՈԳԵԼՈՐ ԼՍԱՐԱՆ ՇԱՐՔԻ ԱՌԱԶԻՆ ԴԱՍԱԽՕՍՈԼԹԻԼՆԸ

Արեւմտեան Թեմիս եկեղեցիներու Երիտասարդաց Կեդրոնական Մարմինը կազմակերպած է ամսական դրութեամբ հոգեւոր դասախօսութիւններու շարք մը, որ պիտի շօշափէ կրօնագիտական, եկեղեցագիտական եւ բարոյական այլ հարցեր։

Բոլոր դասախօսութիւնները կը վայելեն Թեմիս Առաջնորդ Սրբազան Յօր՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը։

Յոգեւոր լսարան հանդիպումներու շարքի առաջինը տեղի ունեցաւ Կիրակի, Մարտ 5-ի երեկոյեան, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի սրահին մեջ։ Օրուան զեկուցաբերն էր Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, որ ներկայացուց «Ինչպէ՞ս կարդալ եւ հասկնալ Աստուածաշունչը» նիւթը։

շրոյց դասախօսութեան ներկայ էին Թեմիս եկեղեցիներու հոգաբարձութեանց եւ երիտասարդական խմբակներու անդամները. ներկայ էր նաեւ Թեմիս առաջին Առաջնորդ՝ Բարձր. Տ. Սմբատ Ս. Արք. Լափաճեան։

Դասախօսութեան սկիզբը, երիտասարդներէ կազմուած նուագախումբը ներկաներուն հոգիները լեցուց՝ հոգեւոր երգերու փունջ մը նուագելով ու երգելով։

Եկեղեցիներու Երիտասարդաց Կեդրոնական Մարմինին անունով բարի գալուստի խօսք արտասանեց Կրէկ Մարթայեան, ապա նաեւ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Յոգաբարձութեան անունով՝ Շիրաց Սաւոյեան։

Դասախօս Յայր Սուրբը նախ ամփոփ պատմականը ըրաւ Աստուածաշունչի կազմութեան, խօսեցաւ Յին եւ Նոր Կտակարաններու Աստուածային ներշնչումով գրուելուն հանգամանքին մասին, ապա բացատրեց, թէ ի՞նչպես պետք է կարդալ ու հասկնալ Աստուածաշունչը, գործնական կարգ մը թելադրութիւններ փոխանցելով ներկաներուն։

Դասախօսութեան աւարտին առիթ տրուեցաւ նաեւ հարցպատասխանի։

Օրուան հուսկ բանքը արտասանեց Բարձր. Տ. Սմբատ Ս. Արք. Լափաճեան, որ գնահատեց օրուան զրուցաբեր Յայր Սուրբը, ապա քաջալերեց ներկաները կարդալու եւ ըմբոշխնելու Աստուածաշունչին ճշմարտութիւններն ու քաղցրութիւնը։

Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն։

FIRST LECTURE OF PRELACY RELIGIOUS EDUCATIONAL SERIES TAKES PLACE

The Western Prelacy Youth Directorate Council has organized a series of seven monthly inspirational lectures under the auspices of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, which will touch upon religious, church-related, and ethical issues.

The first lecture took place on the evening of Sunday, March 5, at the hall of Holy Cross Mother Cathedral in Montebello. The speaker was Very Rev.

Fr. Barthev Gulumian on the subject of "How to read and understand the Bible?"

In attendance was His Eminence Archbishop Sumbat Lapajian, Board of Trustees members from various Prelacy churches, and youth group members.

Prior to the lecture, a band comprised of youth entertained the guests with a few religious songs. Subsequently, Mr. Greg Martayan made opening remarks on behalf of the Prelacy Central Youth Committee and Mr. Shiraz Savoian on behalf of the Holy Cross Board of Trustees.

Very Rev. Fr. Gulumian first gave a brief history on the composition of the Bible and of the nature of the Old and New Testaments being written with Divine inspiration, thus he gave practical suggestions for how to read and understand the Bible. A question and answer session took place after the lecture.

In his comments, Archbishop Lapajian praised Fr. Barthev and encouraged the guests to read the Bible and appreciate its truths.

The lecture was followed by a reception.